



ՏՕՆ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՎԱՐՂԱՎԱՌ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հինգ մեծ տօներէն մէկն է: Այլակերպութիւնը հիմնուած է Յիսուս Զրիստոսի կեանքին ընթացքին պատահած դէպքի մը վրայ, երբ ան իր երեք աշակերտները՝ Պետրոսը, Յակոբոսը եւ անոր եղբայրը Յովհաննէսը առնելով, Թափօր լեռ կը բարձրանայ ու անոնց դիմաց կը պայծառակերպի: Իր դէմքը արեգակի նման կը փայլի եւ զգեստները ձիւնի նման կը ճերմկին:

Վարդավառը՝ հայոց կենդանութեան, ծաղկումի եւ գեղեցկութեան տօնն է, վարդահեղեղ Աստղիկ աստուծոյ եւ հեթանոսական Անահիտ դիցուհիին նուիրուած:

Վարդավառ կը նշանակէ՝ վարդերով զարդարուելու օր, իսկ վառ բառը փայլուն եւ զարդարուն իմաստներով զործածուած է, որովհետեւ այդ օրերուն Աստղիկ եւ Անահիտ աստուածուհիներուն արձանները վարդերով կը զարդարէին:

Վարդավառը կապուած է նաեւ ջրհեղեղի յիշատակին: Ահա թէ ինչու այդ օրը մարդիկ իրար վրայ ջուր կը սրսկեն կամ աղանի կը թոցնեն: Ի յիշատակ Նոյեան աղանիին:

Ջրիստոնէութիւնը պետական կրօնք դառնալէ ետք, Ս. Գրիգոր Լուսաւորիչ ուզեց ամեն ինչ որ հեթանոսական հաւատքի հետ կապ ունի, քրիստոնէացնել, ժողովուրդը ամբօրէն կապելու աստուածային կրօնքին, սակայն զգուշանալով զայն բոլորովին կտրելէ իր պապեանական հնամենի ականջութիւններէն եւ սովորութիւններէն:

Այսօր՝ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին ամեն տարի կը տօնէ Զրիստոսի Այլակերպութիւնը կամ Պայծառակերպութիւնը,



որ մեծ նշանակութիւն ունի որպէս երկնային Նազովրեցի մեծ վարդապետի աստուածութիւն:

Ժողովրդային Սովորութիւններ

Անցեալին սովորութիւն էր Վարդավառը տօնել սարերու վրայ, աղբիւրներու ակունքներուն մօտ, այդ առիթով կը կազմակերպուէին ուխտագնացութիւններ դէպի սրբավայրեր:

Այդ առիթով տեղի ունեցող քանի մը ականջութիւններ յիշենք.

Բաց դաշտերուն մէջ, ակունքներու մօտ կողով մը կը զարդարէին. յատակը ցորենի հասկեր կը դնէին, մէջտեղը խաչափայտ մը, զայն կը զարդարէին եղանակի ամեն տեսակի բանջարեղէնով եւ պտուղներով: Կը զետեղէին տախտակի մը վրայ եւ շուրջը շրջանակներ կազմելով, երիտասարդ թէ տարեց, միասին կը պարէին՝ ի նշան միասնականութեան եւ կենսունակութեան:

Հայերը գիշերը խարոյկ կը վառէին եւ խնձոր կը խորովէին: Եկեղեցիներուն դռներն ալ կը զարդարէին վարդով եւ խորոված խնձորով:

Իրարու վրայ ջուր թափել եւ թրջուած հագուստներով մնալ ամբողջ օրը՝ կը նշանակէր ջուրերու առատութիւն եւ իղձերու իրականացում: Հարսերը իրենց կեսուրներուն վրայ գաղտնի ջուր կը թափէին, իբրեւ սիրոյ եւ միասնականութեան արտայայտութիւն:


Ուխտի կ'երթային, մանաւանդ դէպի Մշոյ Ս. Կարապետ եկեղեցի: Ուխտաւոր մանուկներուն մազերը կը կտրէին, հսկայ կաթսաներով մատաղ կ'եփէին եւ կերուխում կ'ըլլար:

Որոշ շրջաններու մէջ աղանիներ թոցնելը կը խորհրդանշէր ջրհեղեղի վերջը, որովհետեւ Վարդավառը նաեւ կը զուգահիսկ Նոյեան տապանին՝ Արարատ լեռան վրայ կանգ առած օրուան՝ 7-րդ ամսուն 15-րդ օրուան հետ: Ըստ ականջութեան, Նոյ իր թռռներուն կը պատուիրէ տարին անգամ մը յիշատակել ջուրերուն երկրէն քաշուելու օրը:



Թիւր յատուած՝ Մարտի Առօնէն-Շաբաթն
Նպաստարեւոյ՝ Ոստի Բեռնէն



Գիտցի՛ր այն ճամբան, որ կը ջրէ թաղարը:



Իւրաքանչիւր առարկայէն քանի՞ հատ կը տեսնես: Թու՛՛ եւ արձանագրէ՛:

Կրնա՞ս գտնել տասը տարբերութիւններ կրկու պատկերներուն միջեւ:

Թիւերը միացնելով գտի՛ր պահուած պատկերը, ապա՛ գունաւորէ՛:



ԳԱՄԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

- Ո՛ւֆ,- հառաչեց գամը եւ ամուր մը խրուեցաւ տախտակին կուրծքը:

- Վա՛յ, քիչ մը քաղաքավար եղէ՛ք, այդպէս անխիղճ չեն զարներ,- բողոքեց տախտակը եւ իր ծոցին մէջ տեղ տուաւ գամին:

- Ի՛նչ քաղաքավարութիւն, գլուխս կոտրեց այդ մարդը,- ըսաւ գամը զայրանալով:

Երբ մուրճի վերջին հարուածն ալ իջաւ ու գամին գլուխը քիչ մը հանգստացաւ, տրամադրութիւնը փոխուեցաւ:

- Այսպէս ալ չարչարա՞նք կ'ըլլայ,- բացագանչեց անիկա:

- Չարչարա՞նք... ի՛նչ չարչարանք... ի՛նչ կ'ընեք դուք գամերդ որ շարունակ կը տրտնջաք,- ըսաւ զայրացած տախտակը,- չարչարանքը մերն է. մեզ այնքան կը տաշեն, որ հոգինիս կը հանեն եւ վերջն ալ ամեն կողմէ կը ծակեն ու կը ծակծկեն:

- Այդպէս պիտի չխօսէիր, եթէ գիտնայիր թէ ուրկէ կու գամ եւ ինչե՛ր անցեր են գլուխես,- պատասխանեց գամը:



- Ուրկէ՞ կու գաս:

- Մութ աշխարհէն:

- Մութ աշխարհէ՞ն:


- Այո՛, քանի՛ հազար տարիներ թաղուած էի գետնին տակ, քարերուն հետ:

- Բայց ինչպէ՞ս դուրս ելար:


- Ես ի՛նչ գիտնամ: Եկան, փորեցին, ծակեցին, քանդեցին եւ լոյս աշխարհի հանեցին զիս:

- Յետո՞յ:

- Յետոյ հնոց նետեցին, սարսափելի կրակի մէջ: Կրակին բոցերէն թուլցայ, հալեցայ եւ ջուր կտրուեցայ: Յետոյ հանեցին: Հագիւ քիչ մը զովացեր էի, երբ սկսան հաստ ու ծանր ելեկտրական մուրճերով ծեծել, քաշել ու բարակցնել զիս: Բարակցուցին, ահագին մկրատներով կտրեցին, հարուածներ տուին գլխուս, տափակցուցին, վերջն ալ ոտքս խարտոցին տուին: Բայց ի՛նչ,- անելցուց ան յանկարծ,- այս բոլորէն դուն ի՛նչ պիտի հասկնաս, դուն որ կեանքիդ մէջ ո՛չ կրակ տեսած ես, ոչ ալ լոյս աշխարհէն դուրս որեւէ ուրիշ բան:



ԽՆՁՈՐԸ




Խ ն ձ ո Ր Ե ն ի ի ն հ ա յ Ր Ե ն ի ք ը
կը համարուի Կեդրոնական Ասիան:

Ե Ր Կ ար Ժ ա մ ա ն ա կ
թարմութիւնը պահպանող,
քիմքային բարձր արժէքով այս
պտուղը բոլոր կլիմայական
գոտիներու մէջ կը համարուի
կենսասնիւթերու եւ հանքային
աղերու աղբիւր:

Կը պարունակէ մինչեւ 80-
85% շուր, մինչեւ 7-15%
շաքար, բջիջանիւթ,
օրկանական թթուներ,
կենսասնիւթեր, եթերային
իւղեր եւ հանքային աղեր:

Խնձորը՝ առողջութեան
խորհրդանիշն է...:

Խնձորին պարունակած ցած
քանակութեամբ ջերմութը գայն
կը դարձնէ անփոխարինելի՝ գիրութենէ
տառապողներու համար:



Թունաւորումներու պարագային
խորհուրդ կը տրուի օգտագործել
թթու տեսակի խնձորները՝ իրենց
պարունակած օրկանական
թթուներու մեծ քանակին
շնորհիւ:

Խնձորի հիւթը հարուստ է
երկաթով, հետեւաբար՝
օգտակար է արեան
տկարութիւն ունեցողներուն
համար: Անկա նաեւ կը
նպաստէ երիկամի քարերու
հեռացման եւ կը բարելաւէ
շնչառական համակարգը:

Խնձորը ինչպէս նաեւ
վարունգը, նախընտրելի է
ուտել կեղեւով, լաւ լուալէ ետք,
քանի որ անոնց պարունակած

սննդային արժէք ունեցող սիւթերը
կը գտնուին կեղեւին մէջ: